

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

ք. Երևան

29 դեկտեմբերի 2025թ.

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն (ռեկտոր) Էսաչատուր Բորիսի Մելիքսեթյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն որոշման Հավելված N 1-ով հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ձևով պետական ֆինանսավորման կարգը» (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1 Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված 328 931 800 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:
- 1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

- 2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,
- 2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,
- 2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,
- 2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
 - 2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
 - 2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),
 - 2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,
- 2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

- 2.2.1 Կոմիտեի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,
- 2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,
- 2.2.3 Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Կոմիտեն պարտավոր է՝

- 2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,
- 2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

- 2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,
- 2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սահմանված ժամկետում,
- 2.4.3 Պայմանագրի նախահաշիվը կազմել առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 22-ի N 2856-Ա/2 հրամանով ձևավորված միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի արձանագրությամբ,
- 2.4.4 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,
- 2.4.5 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
- 2.4.6 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու ոչ նպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,
- 2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում,
- 2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,
- 2.4.9 Ծրագրի ավարտից հետո Կոմիտե ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան (ամփոփիչ) հաշվետվություն,
- 2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը,
- 2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,
- 2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

3. Պայմանագրի գինը

Պայմանագրի գինը կազմում է 328 931 800 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

- 4.1 Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:
- 4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

- 5.1 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև բյուջետային տարվա ավարտը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

- 9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:
- 9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:
- 9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները


Կոմիտե

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե

ք. Երևան, Օրբելի եղբայրների 22
Հ/հ՝ 900011033033
ՀՎՀՀ՝ 02704199

ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

Գլխավոր քարտուղարի պարտականությունները
կատարող՝


Կ. Տ.
(ստորագրություն)

Կարեն Բորիսի Ղարիբյան


Կազմակերպություն

ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների
ինստիտուտ» ՊՈԱԿ

Մ. Բաղդամյան 24ա
Հ/հ՝ 900018005422
ՀՎՀՀ՝ 00007498

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Կազմակերպության տնօրեն (ոեկտոր)՝


Կ. Տ.
(ստորագրություն)

Խաչատուր Բորիսի Մելիքեթյան

Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

Մելիքեթյան Խաչատուր Բորիսի


**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ**

Մենք՝ ներքոստորագրյալներս, Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանը և Կազմակերպության տնօրեն (ոեկտոր) Խաչատուր Բորիսի Մելիքսեթյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 դեկտեմբերի 2025թ. N 1-23/26-IS/IGS պայմանագրի գնի վերաբերյալ՝ 328 931 800 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Կոմիտե

Գլխավոր քարտուղարի պարտականությունները
կատարող՝


(ստորագրություն) Կ. Տ.
Կարեն Բորիսի Ղարիբյան

Կազմակերպություն

տնօրեն (ոեկտոր)՝


(ստորագրություն) Կ. Տ.
Խաչատուր Բորիսի Մելիքսեթյան

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ՄԳՇ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝	30
Այլ պարբերականում հրապարակում՝	10
Գրքեր, մենագրություններ՝	1
Գիտաժողովի նյութեր՝	25

Կազմակերպության տնօրեն (ոեկտոր)՝


(ստորագրություն)

Խաչատուր Բորիսի Մելիքսեթյան

Կազմակերպության գիտքարտուղար՝


(ստորագրություն)

Շահինյան Հրաչյա




ՆԱԽԱՀԱՇԻՎ
 «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

«Հ դրամ»

Հ/հ	Հողվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)	308 273 450	61 654 690	77 068 362	77 068 362	92 482 036
2.	տնտեսական ծախսեր՝	9 700 000	1 940 000	2 425 000	2 425 000	2 910 000
3.	այլ ծախսեր՝	10 958 350	2 191 670	2 739 587	2 739 587	3 287 506
Ընդամենը՝		328 931 800	65 786 360	82 232 949	82 232 949	98 679 542

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝


 (ստորագրություն)

Խաչատուր Բորիսի Մելիքսեթյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն)

Մարգարիտա Կալմուխյան




Կ. Տ.

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

«Ն դրամ»

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	9 700 000
1.	էլեկտրաէներգիայի ծառայություն	6 000 000
2.	գազի ծառայություն	500 000
3.	ջրամատակարարման ծառայություն	1 000 000
4.	կապի ծառայություն	1 700 000
5.	աղբահանություն	500 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	10 958 350
1.	Գույք	750 000
2.	Սարք, սարքավորում	1 500 000
3.	Նյութեր	1 600 000
4.	Տեղական գործուղումներ	3 000 000
5.	Շենքի պահպանություն	900 000
6.	Այլ ՀՄ պահպանություն	900 000
7.	Մասնագիտական ծառայություններ	900 000
8.	Այլ ընդհանուր բնույթի ծառայություններ	1 300 000
9.	Այլ	108 350

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝


 (ստորագրություն)

Խաչատուր Բորիսի Մելիքսեթյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն)

Մարգարիտա Կալմուխյան



N 1-23/26-15/145

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Լիթոսֆերայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման առանձնահատկությունները, երկրաբանական վտանգավոր երևույթների և պրոցեսների գնահատումը ծրագրի (ծրագրի անվանումը)

1. **Աշխատանքի կատարման հիմքը՝** Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջե:

2. **Աշխատանքի նպատակը** (1 պարբերություն):

Աշխատանքի նպատակն է պահպանել, շարունակել և զարգացնել երկրաբանական գիտության ավանդական ուղղությունները՝ առավել կարևորելով նաև կիրառական մշակումների դերը: Ինստիտուտի յուրաքանչյուր լաբորատորիա իրականացնելու է երկրաբանական գիտության՝ իր ուղղությանը համապատասխան խնդիրների լուծմանն ուղղված հետազոտություններ, որոնք կնպաստեն երկրաբանական գիտության տեսական և կիրառական տարբեր ուղղությունների զարգացմանը Հայաստանում:

3. **Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները** (մինչև 1 էջ):

- Չորրորդական հասակի որոշ հրաբուխների բացարձակ հասակների նոր տվյալներով հրաբխաշերտագրության վերծանումը, հրաբխականության, հրաբխային ակտիվության կրկնման հաճախականության և փուլերի առանձնացումը, Վայոց ձորի մարզի երիտասարդ, հողոցենի հասակի հրաբխային լավային հոսքերի կառուցվածքային և շերտագրության պարզաբանումը և այլ:
- Պալեոգեն-չորրորդական ժամանակահատվածի պալեոմիջավայրի լիթոդինամիկ և էկոլոգիական պայմանների վերականգնում, նստվածքային, հրաբխանստվածքային ապարների լիթոֆացիալ անալիզ և այլ:
- Պետրոլոգիական ուսումնասիրություններ, երկրաքիմիական (XRF, ICP) տվյալների անալիզ՝ ՀՀ մագմատիկ և մետամորֆային համալիրներում: Պալեոգյան-մեզոգյան նստվածքային առաջացումների փոխհարաբերության և կառուցվածքային առանձնահատկությունների ուսումնասիրություն և այլ:
- ՀՀ և շրջակա տարածքի երկրադինամիկ զարգացումների և վտանգավոր երկրաբանական երևույթների (ակտիվ խզվածքներ, լանջային գործընթացներ, հողերի ջրիկացում և այլն), երկրաշարժերի օջախային գոտիների սեյսմիկ վտանգի երկրաբանական հետազոտում և այլ:
- ՀՀ տարածքի մետաղածնական հանքային շրջանների և հանգույցների սահմաններում նոր հանքայնացումների հայտնաբերում, ստացված հեռանկարային տարածքների գնահատում, առկա հանքավայրերի ներուժի և «տեխնածին հանքավայրերի» ուսումնասիրություններ, ոչ մետաղային օգտակար հանածոների ներուժի գնահատում՝ հանքավայրերի և հանքերևակումների ծագումնաբանական առանձնահատկությունների, հասակի, մասշտաբայնության, հանքային մարմինների ձևաբանության հիման վրա, հազվագյուտ հողային տարրերի (Rare Earth Elements) և լիթիումի պոտենցիալի գնահատում՝ Թեժսարի և Մեղրու մագմատիկ ապարների համալիրներում և այլ:
- Տարբեր ծագումնաբանությամբ ջրերի կազմի ձևավորումը պայմանավորող և նրանց վրա ազդեցություն ունեցող բնական ու անտրոպոգեն գործոնների ի հայտ բերում, ազդեցությունների աստիճանի գնահատում, ջրերի որակի կառավարման առաջարկներ, ջրերի դասակարգում ըստ հիդրոքիմիական բնութագրիչների և տարբեր որակի ջրերի օգտագործման նպատակահարմարության գնահատում և այլ:

- Երկրի վրա կյանքի զարգացման պատմության ուսումնասիրություն, Երկրի վրա տեղի ունեցած զանգվածային մասսայական մահացումների (mass extinctions) հետևանքներն ու դրանք առաջացնող պատճառների համալիր ուսումնասիրություններ, տարբեր օրգանիզմների կամ կենդանական և բուսական խմբերի էվոլյուցիոն հետազոտություններ, վերաբերող հետազոտություններ, կլիմայական փոփոխությունների ու կենսոլորտի վրա դրանց ազդեցության ուսումնասիրություն, ՀՀ տարածքում հանդիպող ֆաներոզոյան էոնի տարբեր հասակի նստվածքային ապարներում հանդիպող բրածոների կարգաբանական ուսումնասիրություններ և այլ:
- Բնական էկոհամակարգերի և մարդածին գործոնների միջև փոխազդեցությունների ուսումնասիրություն՝ հեռահար զոնդավորման, մաթեմատիկական վիճակագրության, ԱՏՀ, հիդրոլոգիական, հիդրոերկրաբանական, իզոտոպային և կլիմայական մոդելավորման մեթոդների և գործիքակազմերի կիրառմամբ և այլ:
- Քաղաքների, հատուկ նշանակության տարածքների (ՀԷԿ, ԱԷԿ, ջրամբարներ, պոչամբարներ) սեյսմիկ վտանգի և ռիսկի հավանակային և դետերմինիստիկ գնահատում և այլ:
- Մեյսմոլոգիական և երկրադինամիկ մշտադիտարկման և ժամանակավոր ցանցի զարգացում և արդիականացում՝ երկրաշարժերի ֆոկալ մեխանիզմների հաշվարկ, լարվածադեֆորմացիոն դաշտի քարտեզագրում, ուժեղ երկրաշարժերի մոմենտ թենզորների հաշվարկ և վերլուծություն և այլ:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Ծրագիրը նախատեսում է իրականացնել հետազոտություններ երկրաբանական գիտության ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից ուղղություններով և մեթոդներով:

Հրաբխագիտություն. ՀՀ չորրորդական հասակի հրաբխային շրջանների մանրամասն ուսումնասիրություններ՝ պետրոլոգիական և երկրաքիմիական տվյալների ու մեկնաբանությունների կիրառմամբ, հրաբխասեյսմոլոգիական, սեյսմիկ տոմոգրաֆիական ուսումնասիրությունների պարզաբանմամբ: Նոր տվյալներով հրաբուխների բացարձակ հասակների հրաբխաշերտագրության վերծանում, հրաբխային վտանգի գնահատում: ՀՀ հրաբխային մարզերում հրաբխասեյսմոլոգիական, սեյսմիկ տոմոգրաֆիական տվյալների կիրառում՝ Հայաստանում երկրաջերմային էներգիայի ռեսուրսների հետազոտման և գնահատման նպատակով, առաջարկված հեռանկարային տեղամասերում մանրակրկիտ երկրաբանական, երկրաֆիզիկական, սեյսմիկ տոմոգրաֆիական հետազոտությունների իրականացում և ուր.:

Լիթոլոգիա և ռեգիոնալ երկրաբանություն. Պալեոգեն, նեոգեն ժամանակահատվածում ծովային, լճային, ճահճային և գետային նստվածքակուտակման ավազանների, նաև՝ մարդու գործունեության ընթացքում (Սևանի ավազան, քարանձավներ, քարայրներ), պալեոմիջավայրի պայմանների վերականգնում՝ լիթոլոգիական, հնէաբանական, երկրաքիմիական տվյալների (այդ թվում՝ իզոտոպային) հիման վրա: Կայնոզոյան ժամանակաշրջանում տեղի ունեցած պալեոաշխարհագրական ու պալեոկլիմայական փոփոխությունների (ինչպես տաքացումների, այնպես էլ սառեցումների) ազդեցության գնահատում կենդանական և բուսական աշխարհի զարգացման վրա (այդ թվում Սևանա լճի էկոհամակարգի և լճի մակարդակի տատանումների վրա) և ուր.:

Գեոդինամիկա և երկրաբանական վտանգներ. ՀՀ և հարակից տարածքների երկրադինամիկ զարգացումների (որոնք կարող են ունենալ վտանգավոր, երբեմն՝ կործանարար ազդեցություն միջավայրի վրա) գիտական կամ գիտատեխնիկական ուսումնասիրություններ և ուր.:

Պետրոլոգիա և կառուցվածքային երկրաբանություն. ՀՀ տարածքում պալեոզոյան, մեզոզոյան և կայնոզոյան մագմատիկ, մասամբ մետամորֆային առաջացումների, ինչպես նաև տարահասակ օֆիոլիտային համալիրների հետազոտություն: Կշարունակվեն Հայաստանի

Հանրապետության տարբեր հատվածներում հենակետային կտրվածքներում կամ թույլ ուսումնասիրված տեղամասերում մագմատիկ, մետամորֆային, նաև հրաբխածին-նստվածքային առաջացումների նոր և մանրամասն հետազոտությունները: Մի շարք ինտրուզիաների օրինակով կշարունակվեն ապատիտային «ֆիսսիոն-թերեք» մեթոդով (եվրոպական համագործակցությամբ) իզոտոպահասակային հետազոտությունները: Ածխաջրածինների հեռանկարայնության գնահատում, պալեոլարվածության վերլուծություն՝ 2D սեյսմահետախուզության տվյալների մշակման հիման վրա և ուր.:

Օգտակար հանածոներ. Ածուխների և այրվող թերթաքարերի մետաղաբերության հեռանկարների բացահայտման հետազոտություններ, Հայաստանի մետաղային հանքավայրերում և մագմատիկ համալիրներում հազվագյուտ մետաղների բաշխվածության, ինչպես նաև՝ Փոքր Կովկասի մեզոզոյան կղզադեղային և կայնոզոյան ռեզիոնալ գեոդինամիկ էվոլյուցիայի ընթացքում մետաղական հանքավայրերի ձևավորման կառուցվածքային պայմանների ուսումնասիրություններ և ուր.:

Հազվագյուտ մետաղների հետազոտում.

Մագմատիկ ապարներում ռազմավարական նշանակություն ունեցող հազվագյուտ հողային տարրերի (Rare Earth Elements) և լիթիումի պարունակությունների հետազոտություններ:

Հիդրոերկրաբանական և անալիտիկ հետազոտություններ.

ՀՀ տարածքի ջրային ռեսուրսների կազմերի ձևավորման, ծագումնաբանության և անտրոպոգեն գործունեության ազդեցությամբ պայմանավորված փոփոխությունների հիդրոերկրաբանական հետազոտություններ, ջրերի կազմերի/որակի կառավարման գիտական սկզբունքների մշակում, փոփոխությունների ինտենսիվության աստիճանի կանխատեսում և դրանց աղբյուրների բացահայտում ու գնահատում: Հայաստանում ջրերից որոշ տարրերի կորզման հնարավորությունների հիդրոբանական գնահատում, երկրաբանական տարբեր գոյացությունների սիլիկատային և այլ անալիզներ և ուր.:

Հնէաբանություն, շերտագրություն և պալեոմիջավայր.

Հայաստանի պալեոզոյան կտրվածքներում ուշ դևոնի զանգվածային անհետացումների (mass extinctions) պատճառների և հետևանքների ուսումնասիրություն, պալեոզոյան և մեզոզոյան դարաշրջանների ընթացքում գոյություն ունեցած կենդանական և բուսական տարբեր խմբերի էվոլյուցիոն հետազոտության վերլուծություն, պալեոզոյի ընթացքում տեղի ունեցած կլիմայական փոփոխությունների ու կենսոլորտի վրա դրանց ազդեցության ուսումնասիրություն և ուր.:

Երկրաբանական թանգարան.

Երկրաբանական գիտության հանրայնացում, թանգարանային հավաքածուների համալրում, հաշվառում, պահպանություն, բնության հուշարձանների գիտական ուսումնասիրություններ, թանգարանային առարկաների և հավաքածուների հանրայնացում:

Երկրատեղեկատվության լաբորատորիա.

ՀՀ տարածքում բնական էկոհամակարգերի և մարդածին գործոնների միջև փոխազդեցությունների ուսումնասիրություն հեռահար զոնդավորման, մաթեմատիկական վիճակագրության, ԱՏՀ, հիդրոլոգիական, հիդրոերկրաբանական, իզոտոպային և կլիմայական մոդելավորման մեթոդների և գործիքակազմերի կիրառմամբ: Նախատեսվում է շարունակել Արարատյան արտեզյան ավազանում ստորերկրյա ջրերի ծագումնաբանության և վերականգնման ռեժիմի ուսումնասիրություններ՝ իզոտոպային մեթոդների կիրառմամբ, Սևանա լճի ավազանում ջրապահովվածության և էկոհամակարգային ծառայությունների վրա կլիմայի փոփոխության ազդեցությունների գնահատում, Վեր-ԱՏՀ համակարգում հեռազննման տվյալներից բնապահպանական և հողօգտագործման ցուցանիշների հաշվարկման ավտոմատացում և տվյալների բազայի ստեղծում և ուր.:

Կիրառական երկրաֆիզիկա և գեոմոնիթորինգ.

Սեյսմոլոգիական ցանցի արդիականացում, այդ թվում՝ նոր սեյսմիկ կայանների տեղադրում (ըստ անհրաժեշտության), գործող ցանցի սարքավորումների վերազինում: Երկրակեղևի ժամանակակից շարժումների մոնիտորինգ, ՀՀ և հարակից տարածքների երկրակեղևի

լարվածադեֆորմացիոն վիճակի, կառուցվածքի ուսումնասիրում: Կշարունակվեն երկրակեղևի կառուցվածքի անհամասեռության ժամանակակից գեոդինամիկ ուսումնասիրությունները և դրանց կապը Փոքր Կովկասի ակտիվ տեկտոնիկայի և հրաբխականության հետ:

Սեյսմոլոգիա

Սեյսմոլոգիական և երկրադինամիկ մշտադիտարկման և ժամանակավոր ցանցի զարգացում և արդիականացում՝ երկրաշարժերի ֆոկալ մեխանիզմների հաշվարկ, լարվածադեֆորմացիոն դաշտի քարտեզագրում, ուժեղ երկրաշարժերի մոմենտ թենզորների հաշվարկ և վերլուծություն՝ կատալոգի կազման նպատակով: Երկրակեղևի ուժեղ շարժումների (strong motion) գրանցումների մշակում, վերլուծություններ:


Կազմակերպության
տնօրեն (ռեկտոր)՝



(ստորագրություն)

(Խաչատուր Մելիքսեթյան)
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝



(ստորագրություն)

(Խաչատուր Մելիքսեթյան)
(անուն ազգանուն)



N 1-23/26-15/165

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

Լիթոսֆերայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման առանձնահատկությունները, երկրաբանական վտանգավոր երևույթների և պրոցեսների գնահատումը ծրագրի (ծրագրի սակմանով)

Իրականացվելիք միջոցառման				
h/h	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառնությունների նկարագիրը	կատարման ժամկետները
	Գրականության, արխիվային տվյալների մշակում, նոր սարքավորումների և քիմիական նյութերի ձեռքբերում և կիրառման նախապատրաստում	Ուսումնասիրվող տարածքի վերաբերյալ հրատարակված և արխիվային տվյալների հավաքագրում և համակարգում, նոր սարք/սարքավորումների և քիմիական նյութերի ձեռք բերում և օգտագործման նախապատրաստում, նոր ծրագրային փաթեթների ներդրում	Գրադարանային և արխիվային աղբյուրների ուսումնասիրում և տվյալների թվայնացում GIS ֆորմատով, լաբորատոր սարքավորումների նախապատրաստում և շահագործում, նոր սարք/սարքավորումների, ինչպես նաև քիմիական նյութերի գնում, համապատասխան ծրագրային փաթեթների ներդրում, սարքերի կիրառման և մեթոդների յուրացման նպատակով գիտագործնական քննարկումների և ուսուցողական միջոցառումների իրականացում	01-03.2026թ
	Ղաշտային երկրաբանական աշխատանքներ, նմուշառում, բնական վտանգների և ռիսկերի գնահատում, քարտեզագրում, գիտական հոդվածների, գիտաժողովների նյութերի նախապատրաստում	Ուսումնասիրվող տարածքներում ղաշտային երկրաբանական աշխատանքների իրականացում, բնական վտանգների և ռիսկերի գնահատում, նմուշառում և քարտեզագրման աշխատանքներ, ղաշտային սարքավորումների տեղադրում, սպասարկում և պահպանություն: Գիտական հոդվածների, գիտաժողովների նյութերի և համառոտ հաշվետվությունների պատրաստում:	Նստվածքային առաջացումների, բրածոների, հրաբխային ապարների և հանքանյութերի, ինչպես նաև ջրերի և հողերի նմուշառում, երկրաբանական երթուղիների պլանավորում և կազմակերպում, շերտագրական կտրվածքների կազմում և նկարագրություն, բնական վտանգների և ռիսկերի գնահատում, քարտեզների ճշգրտում և GIS տվյալների մշակում, ղաշտային սարքավորումների տեղադրում, սպասարկում և շահագործում: Ստացված տվյալների հիման վրա համառոտ հաշվետվությունների, գիտաժողովների նյութերի և գիտական հոդվածների նախապատրաստում	04-06.2026

* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով:

<p>Անալիտիկ հետազոտություններ, դաշտային աշխատանքներ, սեմինարներ, աշխատանքային հանդիպումներ, նախկին համագործակցությունների ամրապնդում և նորերի հիմնում</p>	<p>Ուսումնասիրությունների իրականացում՝ դաշտային և լաբորատոր պայմաններում, նմուշների քիմիական կազմի և ֆիզիկոմեխանիկական հատկանիշների ուսումնասիրություն և վերլուծություն, սարքավորումների սպասարկում և մեթոդների մշակում, նախնական տվյալների ներկայացում և համագործակցության շրջանակների զարգացում</p>	<p>Դաշտային աշխատանքներ՝ երկրաբանական երթուղիների կազմակերպում, շերտագրական կտրվածքների կազմում և նկարագրություն, նմուշառում (նստվածքային առաջացումներ, բրածո մնացորդներ, հրաբխային ապարներ, հանքանյութեր, ջրեր և հողեր) և քարտեզների ճշգրտում: Լաբորատոր պայմաններում նստվածքային ապարների մշակում և բրածոների առանձնացում, մանրադիտակային հետազոտություններ և ստացված տվյալների վերլուծություն: Դաշտային աշխատանքների ընթացքում վերցված հանքանյութերի, հրաբխային ապարների և ջրերի հիմնական բաղադրիչների սպեկտրոմետրիկ, հիդրոքիմիական և այլ անալիտիկ հետազոտություններ, հղկուկների պատրաստում և տվյալների հավաքագրում: Ստացված արդյունքների քննարկում միջազգային գործընկերների հետ՝ նախկինում ձեռք բերված համագործակցությունների ամրապնդում և նորերի ստեղծում:</p>	<p>07-09. 2026թ</p>
<p>Ստացված տվյալների վերլուծություն և հանրայնացում, տարեկան հաշվետվություն</p>	<p>Ստացված տվյալների մշակում, վերլուծություն, հաշվետվությունների պատրաստում, գիտական հոդվածների պատրաստում և հանձնում տպագրության, արդյունքների ներկայացում սեմինարներում և հանրայնացում</p>	<p>Տվյալների մշակում և վերլուծություն՝ տարբեր մասնագիտական ծրագրերի միջոցով, ստացված արդյունքների հրատարակում, զեկուցումներ, տվյալների հանրայնացում և արդյունքների ներկայացում սեմինարներում, տարեկան հաշվետվությունների կազմում</p>	<p>10-12.2026թ</p>

Կազմակերպության
տնօրեն՝


(ստորագրություն)

(**Խաչատուր Մելիքսեթյան**)
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

(**Խաչատուր Մելիքսեթյան**)
(անուն ազգանուն)